

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 45/2

18 սեպտեմբերի 2013 թ.

Քննարկվեց <Իզոտոն> ՍՊԸ 05.09.2013 թ-ի բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 20.08.2013 թ-ի թիվ 1008580 ստուգման ակտի դեմ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 10.12.2012 թ-ի թիվ 1008580 հանձնարարագրի <Իզոտոն> ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 20.08.2013 թ-ի թիվ 1008580 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 1.384.817 դրամ:

<Իզոտոն> ՍՊԸ բողոքում մասնավորապես նշված է.

Ընկերությունը զբաղվում է փայտյա տարաների, տակառների արտադրությամբ, ունեցել է երեքից վեց բանվոր ծառայողներ: 2009 թ-ից տնտեսական ճգնաժամի պատճառով արտադրական ծավալները նվազել են մի քանի անգամ, ունենալով երկուսից երեք բանվոր ծառայողներ:

2012 թ-ին ընկերության աշխատակցուհի Հայկուհի Իսախանյանի ֆիզ. արձակուրդ գնալու պատճառով ներկայացրել ենք Եղեգնաձորի ՏՀՏ նախաձեռնյալ և հետձեռնյալ անաշխատունակության թերթիկը՝ վճարման վերաբերյալ տեղեկանք ստանալու համար, սակայն տարածքային հարկային տեսչության կողմից առաջարկվեց ֆիզ. արձակուրդի անաշխատունակության թերթիկը չներկայացնել վճարման, քանի որ Հայկուհի Իսախանյանը տնօրենի աղջիկն է: Արդյունքում 01.09.2012 թ-ին ընկերությունում նշանակվեց ստուգում: Ստուգումներից հետո չհայտնաբերվեց խախտումներ և մեզ չներկայացրեցին ստուգման ակտ կամ տեղեկանք ստուգման արդյունքների վերաբերյալ: Եղեգնաձորի ՏՀՏ-ի կողմից մեզ չտրամադրվեց տեղեկանք, որպեսզի ներկայացնենք Սոցապ. նախարարություն ֆիզ. արձակուրդի գումարը ստանալու համար, այլ գործը ուղարկվեց ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչություն, որտեղ կատարվեց քննություն: Կրկին անգամ ընկերությանը չներկայացվեց փաստաթուղթ խախտումների վերաբերյալ: 2012 թ-ի դեկտեմբերի 28-ին՝ ծննդյան տոների նախօրյակին, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի թիվ 1008580 հանձնարարագրի համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 31-րդ բաժնի կողմից կատարվեց ստուգում:

Ստուգող անձինք հենց ստուգման սկզբից բացահայտ ասացին, որ ստուգումը կապված է ընկերության կողմից վճարված ֆիզ. արձակուրդի գումարի հետ, որը կազմում է 154.760 դրամ, և իրենք պետք է գրեն մի քանի անգամ ֆիզ. արձակուրդի գումարը գերազանցող ակտ:

Ստուգման ակտի նախագիծը ներկայացվեց ընկերությանը 07.08.2013 թ-ին, որի մեջ արձանագրված էր 1.384.817 դրամ տույժ, տուգանք, այն դեպքում, երբ ընկերության 2012 թ-ի շրջանառությունը կազմում է ընդամենը 1.534.800 դրամ: Ստուգման ակտում գրված գումարները հիմնավորված չեն, կան սխալներ: Համաձայն ստուգման ակտի, ստուգման արդյունքներով ԱԱՀ-ի 2010 թ-ի 2-րդ եռամսյակը ունի երեք հատ հաշվարկված տարբեր գումարներ, որի վերաբերյալ ներկայացրել ենք մեր առարկությունները, որոնք սակայն, չեն ընդունվել:

Խնդրում ենք ուսումնասիրել վերը նշված փաստերը և վերանայել թիվ 1008580 ակտը և կայացնել օբյեկտիվ, օրենքի պահանջներից բխող որոշում :

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով <Իզոտոն> ՍՊԸ տնօրենի և ստուգման ակտը կազմած պաշտոնատար

անձի ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Ստուգման ակտի 5-րդ կետում մասնավորապես արձանագրվել է.

համաձայն ընկերության ներկայացրած փաստաթղթերի ընկերությունը 2010 թ-ի հաշվետու տարում պետք է հանդիսանար ԱԱՀ վճարող: Ընկերությունը խախտել է <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի գ) կետի պահանջները՝ սույն հոդվածով սահմանված ԱԱՀ-ի շեմը (58,35 միլիոն դրամ) չի կիրառվում այն առևտրային կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ, որի կողմից նախորդ օրացուցային տարում՝ 2009 թ-ին, ապրանքների մատակարարումից կամ ծառայությունների մատուցումից (բացառությամբ գույքի վարձակալության, անհատույց օգտագործման, ոչ նյութական ակտիվների օտարման և տոկոսների) ստացված հաշվարկված եկամուտների առնվազն 80 տոկոսը վերաբերվում է մեկ վճարողից: Նախորդ՝ 2009 թ-ի օրացուցային տարվա եկամուտը կազմել է 70.000 դրամ, որը ստացվել է <ՇԵՆ> ԲՀ-ից և կազմում է 2009 թ-ի հաշվարկված եկամուտների 100 տոկոսը: Համաձայն <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ ԱԱՀ-ի դրույքաչափը սահմանվում է ապրանքների ու ծառայությունների լրիվ արժեքով հատուցման գումարի մեջ ԱԱՀ-ի գումարը որոշվում է 16.67 տոկոս հաշվարկային դրույքաչափով: Ընդամենը 2010 թ-ի չհաշվարկված ԱԱՀ-ի գումարը կազմում է 331.385 դրամ, որի վերաբերյալ ընկերությունը չի ներկայացրել ԱԱՀ-ի հաշվարկներ:

Հիմք ընդունելով <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 23-րդ, 24-րդ և 25-րդ հոդվածների դրույթները ԱԱՀ-ի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 877.022 դրամ:

Ստուգման ակտով լրացուցիչ պարտավորություններ են առաջադրվել նաև եկամտահարկի գծով՝ ընդամենը 7795 դրամ և <Դրամարկղային գործառնությունների մասին> ՀՀ օրենքի պահանջները խախտելու համար՝ ընդամենը 500.000 դրամ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն. <Ստուգումն օրենքի հիման վրա իրականացվող ընթացակարգ է, որով պարզվում է տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հայտարարագրերի, հարկերի և պարտադիր այլ վճարների գծով նախատեսված հաշվարկների, ելակետային տվյալների, այլ փաստաթղթերի (այսուհետ՝ հաշվետվություն) արժանահավատությունը և վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին>:

Հանձնաժողովի համոզմամբ քննարկվող դեպքում խախտվել են <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի պահանջները: Մասնավորապես, ստուգման ակտով, ղեկավարվելով <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի գ) կետի պահանջներով, ընկերությունը 2010 թ-ի ընթացքում համարվել է որպես ավելացված արժեքի հարկ վճարող, որի հետևանքով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 877.022 դրամ ԱԱՀ:

Նման պայմաններում, հաշվի առնելով, որ ընկերությունն այդ ժամանակահատվածում աշխատել է վնասով, ստուգման ակտով ավելացված արժեքի հարկի գծով պարտավորություններ առաջադրելու հետ մեկտեղ պետք է կատարվեր նաև վնասի ավելացում, ինչը սակայն, չի կատարվել:

Տվյալ դեպքում խախտվել է նաև <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի <ա> կետի պահանջները, որի համաձայն. <Վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում>:

Իր հերթին <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները>:

Ստուգման ակտի ուսումնասիրությամբ պարզվեց նաև, որ դրանում առկա են մեխանիկական սխալներ, որոնք հիշատակվել են նաև ընկերության կողմից ներկայացված բողոքում: Մասնավորապես, թե ստուգման ակտի նախագծի և թե ստուգման ակտի աղյուսակներում ԱԱՀ 2010 թ. 2-րդ եռամսյակ, ԱԱՀ 2010 թ. 3-րդ եռամսյակ և ԱԱՀ 2010 թ. 4-րդ եռամսյակի փոխարեն նշվել է <ԱԱՀ 2010 թ. 2-րդ եռամսյակ>, ինչն իրականությանն ըստ էության չի համապատասխանում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի <ա> կետի պահանջներով, որի համաձայն անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, ընկերության բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Յ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 20.08.2013 թ-ի թիվ 1008580 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝

S.ԲԱՐՍԵՂՅԱՆ

